

Վ. ՆԵՐՍԷՍԵԱՆ (ԽՄԲԱԳԻՐ), «ՈՐՈՆՈՒՄՆԵՐ ՀԱՅ ԵՐԱԺՇՏՈՒ-  
ԹԵԱՆ ՇՈՒՐՁ», Բահն եւ Ավերիլի Հրատարակչուքիւն, Լոնտոն,  
1978, 222 էջ:

Հատորի ներածութիւնը շարադրած է Դոկտ. Վ. Ներսէսեան, որ պատասխանատուն է Բրիտանական Մատենադարանի Արեւելեան Չեռագրաց եւ Հրատարակութեանց Բաժնին: Այդ ներածականին մէջ ներկայացուած են հայկական խաղերու պատմականը, անոնց զանազան յեղաշրջումները զարբերու ընթացքին, հուսկ՝ անոնց կորուստը, ապա՝ վերջին շրջաններուն, զանոնք «կարդալու» փորձերը: Այդ փորձերուն մասնակցած են նաեւ եւրոպացի երաժշտագէտներ, որոնք ձախողած են՝ որովհետեւ, ըստ Վ. Ներսէսեանի, անոնք փորձած են եւրոպական, յունական ու այլ խաղային նմանութիւններուն հիման վրայ լուծել հայկական խաղերու առեղծուածը: Այսօր հետզհետէ բացայայտ կը դառնայ, թէ հայկական խաղերը ինքնուրոյն մշակումով ձայնանիշեր եղած են:

Ներածութեան կը յաջորդեն արտատպուած ուսումնասիրութիւններ, որոնք 1970-1977 թուականներուն՝ հրատարակուած են զանազան թերթերու մէջ:

Ա.— Ս. Փոլատեան, Կոմիտաս եւ իր Նպաստը Հայ Երաժշտագիտութեան (անդլերէն):

Հոն հրատարակուած է նաեւ Երեւանի Կոմիտասեան Արխիւներու համառօտ բովանդակութիւնը:

Բ.— Ն. Թահմիզեան, Հայկական Երաժշտութեան Հին Չեռագրերը եւ Անոնց Ընթերցումը (Ֆրանսերէն):

Հեղինակը կը դիտէ, թէ մեզի հասած հայ երաժշտագրական սլատառիկները թէեւ սրատկառելի քանակ մը կը ներկայացնեն, սակայն ցարդ չենք յաջողած լման լուսարանել անոնց ձայնային դադունիքը :

Գ. — Ն. Սերգոյեան, Ն. Թահմիզեան, Պ. Ութիէ, Հայկական Ուր-Ձայնեռու Ծագումիւն Ծարք (Փրանսերէն) :

Երեք հեղինակներ՝ մեկնելով երեք տարբեր ուղիներէ, երեք մերձեցումներ ունին սոյն հարցին շուրջ.

Ն. Սերգոյեան կը ծանրանայ Հայկական Ութ Ձայներու վրայ եւ դանոնք «Թարգմանելով» եւրոպական ձայնանշիշերու՝ կը հրապարակէ : Պէտք չէ՞ր սակայն նշել, թէ իր արտագրած եղանակները ո՞ր շրջանի աւանդութեան կը պատկանին, քանի որ դիտենք թէ Ութ Ձայները ինչպէս առ հասարակ մեր բոլոր շարականներուն եղանակները՝ մե՛րթ թե՛թեւ, մե՛րթ զլալի տարբերակներով հասած են մեզի, իրենց աշխարհագրական մեկնակէտին համաձայն :

Ն. Թահմիզեան իր ուշադրութիւնը դարձուցած է Կանոնագրութեանը ուսումնասիրութեան, եւ դանոնք եւրոպական խաղադրութեամբ արտագրելէ ետք՝ հրապարակած է :

Պ. Ութիէ Հայկական Ութ Ձայները կ'ենթարկէ լատինական հին երգեցողութեան (կրէկորիան) վերլուծումի մեթոտներուն, անոնց շարիերն ու կշորթը թուանշաններու վերածելով. հարկ կա՞յ հոս յիշեցնել, թէ երաժշտութիւնը նաե՛ւ անցեալին կը սրտականէր թուարանական գիտութեան : Հեղինակը սոյն գիտական մերձեցումներէն նմանութիւններ կը քաղէ հայկականին եւ արեւմտեանին միջեւ՝ եղանակի յեղաշրջումի մարդէն ներս : Ապա այդ բաղդատական փորձերէն ետք, կ'եզրակացնէ թէ հայ երաժշտութիւնը ունի թէ՛ ինքնատուութիւն եւ թէ՛ համանմանութիւններ արեւմտեան ծիսական երգեցողութեան հետ : Հակառակ ուրիշներու կարծիքին, մենք եւս համաձայն ենք Պ. Ութիէի հետ, թէ Հայկական Ութ Ձայներու «ձայն»-ի եւ «կողմ»-ի ենթաբաժանումները երաժշտական հիմ չունին, «արուեստական» են, այսինքն՝ արարողական մեկնակէտ ունին : Յամենայն դէպս, Պ. Ութիէի ուսումնասիրութիւնը հետաքրքրական փորձ մըն է, եւ արժանի է աւելի խոր ուշադրութեան :

Դ. — Ռ. Աթայեան յաջորդարար ստորագրած է երեք ուսումնասիրութիւններ (գերմաներէն) .

1. Հայկական խաղադրութեան արդի արտագրութիւնը . 2. Հայ արհեստավարժ երաժշտութիւնը Միջին Դարուն (Շարական, Տաղ) . 3. Հայ ժողովրդային երգը :

Ե. — Ն. Թահմիզեան կ'ուսումնասիրէ Սաղմոսներու հայկական մեղեդիներու աւանդական ժառանգութիւնը (գերմաներէն) :

Հայկական հին երաժշտութիւնը՝ զարգացած աշխարհին ծանօթացնելու այս փորձը գնահատելի է ամէն տեսակէտէ : Որոնումներ Հայ երաժշտութեան Ծուրջ հատորը կարծէք կանչ մըն է ուղղուած աշխարհի երաժշտադէտներուն՝ լուսարանելու համար հայ խաղերու տեղդուածը եւ անոնց ներփակած երաժշտութիւնը : Այս պատճառով, հատորը աւելի շատ հարցականներ եւ լուծումի փորձեր ունի, քան՝ իսկական լուսարանութիւններ : Միանգամայն, անոր մէջ ներփակուած կը գտնենք ինչ որ հայ հին հոգեւոր երաժշտութեան մասին գիտականօրէն ձեռք ձգուած է մինչեւ հատորի հրատարակութեան թուականը :

Քանի մը հեղինակներու նոյն նիւթին շուրջ կատարած ուսումնասիրութիւնները անխուսափելիօրէն կրկնութիւններ եւ երկարաբանութիւններ յոռաջ պիտի բերէին :

Դիտողութիւն մը եւս. հատորին տիտղոսը անհամապատասխան է իր բովանդակութեան հետ. արդարեւ, վերնազիրը կրնայ շիտթ ստեղծել այն ուսումնասէրներուն մօտ, որոնք յատկապէս հետաքրքրուած են արդի հայ երաժշտութեամբ : Պէտք էր նշուէր թերեւս, թէ սոյն հատորը կը հայի Հայ երաժշտութեան ակունքներուն :